ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1961 Общественные науки

Լ. Մ. Հարությունյան

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ ՍՄԿՊ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

ՍՄԿՊ Ծրագրի նախագծում ամենայն խորությամբ մշակված է կոմունիստական հասարակարգի անցման համար անհրաժեշտ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման պլանը։

Կոմունիզմի կառուցման գլխավոր խնդիրը՝ նրա նյութա-տեխնիկական բազայի ստեղծումն է։ Միաժամանակ կոմունիզմը չի կարելի կառուցել առանց գյուղատնտեսական մթերքների առատության։ Այս պատճառով Ծրագրի նախագծում խնդիր է դրված առաջիկա 10 տարում գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր ծավալը մեծացնել մոտավորապես 2,5 անգամ, իսկ 20 տարում՝ 3,5 անգամ։

Գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացումը թույլ կտա լուծելու երկու հիմնական խնդիր.

ա) հասնել բնակչության համար բարձրորակ սննդամթերքների և արդյունաբերության համար հումքի առատության,

բ) ապահովել սովետական գյուղի աստիճանական անցումը կոմունիստական հասարակական հարաբերությունների և հիմնականում վերացնել քաղաքի և գյուղի տարբերությունները։

Ծրագրի նախագծում հստակ կերպով տված է սոցիալիստական սեփականության երկու ձևերի զարգացման, նրանց մերձեցման, իսկ հետագայում մեկ ընդհանուր կոմունիստական սեփականության մեջ ձուլելու ուղիները։

Մանր արդյունաբերության բազայի վրա գյուղում կոմունիստական հարաբերությունների զարգացումը տեղի կունենա կոլտնտեսությունների ու սովխոզների զարգացման ու կատարելագործման ճանապարհով։

1. ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԿԱՐԳԸ ԿՈՄՈՒՆԻԶՄԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ

Վ. Ի. Լենինը տալով մանր գյուղացիական տնտեսությունները կոմունիզմի կառուցման մեջ ընդգրկելու իր հանճարեղ կոոպերատիվ պլանը, միաժամանակ նշեց, որ դեպի կոմունիզմ գյուղացիության աստիճանական անցումը տեղի է ունենալու կոոպերացման պարզ ձևերից ավելի բարդ ձևերին անցնելու միջոցով։ Գյուղացիության կոոպերացման միակ ճիշտ ձևը, որով գյուղում իրականացվեց սոցիալիզմի կառուցումը, և ստեղծվեց դրան համապատասխան սեփականության ձև՝ հանդիսացավ կոլտնտեսային կարգը իր արտելային ձևով։ Այն լրիվ չափով ցույց տվեց իր առավելությունները կապիտալիստական գյուղացիական տնտեսությունների նկատմամբ։ ՍՍՌՄ-ում ստեղծվեց աշխարհում ամենախոշոր մեքենայացված գյուղատնտեսություն։ Գյուղացիական արտադրական կոոպերացիայի մյուս, պարզ ձևերը, որոնք չէին համապատասխանում արտադրողական ուժերի զարգացման պահանջներին, կոլեկտիվացման որոշ շրջանում դադարեցին գոյություն ունենալուց։

Սոցիալիզմից կոմունիզմին անցնելու պրոբլեմները մշակելիս բնականորեն առաջացավ կոլտնտեսային կարգի, կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականության հետագա զարգացման հարցը։ Հայտնի է, որ ոմանք կարծում էին, թե կոլտնտեսային-արտելային ձևը զարգացման որոշ էտապում պետք է փոխվի գյուղատնտեսական կոմունայի։ Այդ նշանակում էր, որ գյուղը, կոլտնտեսային սեփականությունը դեպի կոմունիզմ զարգանալու էր մեկ ուղիով, իսկ քաղաքը՝ համաժողովրդական սեփականությունը՝ մի այլ ուղիով։ Այլ կերպ ասած սովխոզները, պետական տնտեսությունները գնալու էին դեպի կոմունիզմ ուղղակի, իսկ կոլտնտեսությունները կոմունաների միջոցով։

Կոլտնտեսային շինարարության պրակտիկան հիմնովին ժխտեց այդ տեսակետը։

Տնտեսագետներից ոմանք կարծում էին, որ եթե սովխոզները ունեն արտադրության միջոցների հանրայնացման ավելի բարձր մակարդակ, հիմնված են համաժողովրդական սեփականության վրա, ավելի են համապատասխանում կոմունիզմի կառուցման խնդիրներին, քան կոլտնտեսությունները, որոնց հանրայնացման մակարդակը ցածր է, և հիմնված են կոոպերատիվ սեփականության վրա։

Այստեղից նրանք հանգում էին այն եզրակացությանը, թե անհրաժեշտ է բոլոր կոլտնտեսությունները սովխոզացնել, գյուղատնտեսական արտելից անցնել սովխոզային ձևի։

Հայտնի է, որ վերջին ժամանակներս Միության մեջ կազմակերպվեցին բավականին նոր սովխոզներ, որոնք իրենց մեջ ընդգրկեցին մեծ թվով կոլտնտեսություններ։ Այդ դրությունը կարծես ավելի ամրապնդեց կոլտնտեսությունների սովխոզացման տեսակետը։ Սակայն այդ հայացքի կողմնակիցները խորը չէին թափանցել տվյալ երևույթի էության մեջ։

Որոշ կոլտնտեսությունների ընդգրկումը սովխոզային սիստեմում բխում էր ոչ թե կոլտնտեսային կարգի, կոլտնտեսային սեփականության զարգացման բնույթից, այլ տնտեսա-կազմակերպչական հարցերի լուծման անհրաժեշտությունից։

Այս, անհրաժեշտ էր, որպեսզի մեծ քաղաքների շրջաններում ստեղծվեին խոշոր, բարձր ապրանքային, ինտենսիվ բանջարաբուծական, անասնապահական տիպի մասնագիտացված տնտեսություններ։ Այդ նպատակի համար անհրաժեշտ էին գյուղատնտեսական հողատարածության խոշոր մասիվներ։ Հասկանալի է, որ այն կոլտնտեսությունները, որոնք գտնվում էին այդ խոշորացվող, նոր սովխոզներ ստեղծելու տարածությունների վրա, չէին կարող մնալ որպես տնտեսական առանձին օղակներ, և պետք է ընդգրկվեին սովխոզներում։ Այդ նույն սկզբունքով սովխոզացվեցին այնպիսի կոլտնտեսություններ, որոնք գտնվում էին նոր յուրացվող հողատարածությունների վրա։

Որոշ կոլտնտեսություններ դարձան սովխոզներ այլ պատճառներով։ Վերջին ժամանակներս Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը մշակեցին խոշոր միջոցառումներ, որոնք ուղղված էին կոլտնտեսությունները է՛լ ավելի ամրապնդելուն։ Ուսումնասիրությունները ցույց տվին, որ որոշ կոլտնտեսություններ հողի սակավության, բանվորական ձեռքերի պակասության, բնակլիմայական և տնտեսական այլ պատճառներով հետագա զարգացման համար հեռանկար չունեն։ Այդպիսի տնտեսություններում նպատակահարմար չէր նույնիսկ խոշոր կապիտալ ներդրումներ կատարել։ Հաշվի

առնելով այդ, նման կոլտնտեսությունները կամ ընդգրկվեցին մոտիկ ընկած կոլտնտեսություններում, կամ սովխոզներում։ Չի կարելի աչքաթող անել և այն ոչ նորմալ դրությունը, երբ որոշ շրջանների պարտիական և սովետական ղեկավարները այն գիծը բռնեցին, որ ավելի հեշտ է տնտեսապես թույլ կոլտնտեսությունները սովխոզացնել, նրանց պահել պետական բյուջեի հաշվին, քան բարձրացնել այդ կոլտնտեսությունների էկոնոմիկան։ Դրանով է բացատրվում, որ մի շարք տնտեսապես ուժեղ կոլտնտեսություններ դարձրին սովխոզներ այն դեպքում, երբ դրա կարիքը չէր զգացվում։

Իհարկե, բացառված չէ հետագայում ևս որոշ կոլտնտեսությունների բազայի վրա սովխոզներ ստեղծելու հնարավորությունը։ Սակայն այդ կպայմանավորվի ոչ թե կոլտնտեսությունների վերացմամբ, այլ տնտեսա-կազմակերպչական անհրաժեշտությամբ։

Վ. Ի. Լենինը նշում էր, որ գյուղացին դեպի կոմունիզմն է գնալու ոչ թե գյուղատնտեսական բանվոր դառնալու միջոցով, այլ տեխնիկայի ավելի բարձր գինվածության, հողագործության կուլտուրայի բարձրացման, կոոպերացիայի միջոցով։ «...կոոպերացիան,—նշում էր Լենինը,—մեր պայմաններում միշտ և ամենուրեք միանգամայն համընկնում է սոցիալիզմի հետ»[1], մի այլ տեղ Լենինը գրում է, որ «կոոպերացիայի հասարակ աճումը նույնանիշ է սոցիալիզմի աճմանը»[2]։

Ընկեր Ն. Ս. Խրուշչովը քննադատելով կոլտնտեսությունների սովխոզացման հայացքները, նշում է, որ «կոոպերատիվ սեփականությունը հակասության մեջ չի գտնվում կոմունիստական հասարակարգի կառուցման ուղիների վերաբերյալ մեր պարտիայի տեսական դրույթների հետ, քանի որ կոմունիզմի ուղին ընկած է ինչպես համաժողովրդական, այնպես էլ կոոպերատիվ սեփականության զարգացման միջով»[3]։

ՍՄԿՊ Ծրագրի նախագծում զարգացված է գյուղացիության կոոպերացման լենինյան ուսմունքը, տրված է կոլտնտեսությունների և սովխոզների դերը կոմունիզմի ծավալուն կառուցման շրջանում և նրանց հետագա զարգացման ուղին։

Կոլտնտեսային ձևը լիովին համապատասխանում է գյուղի ժամանակակից արտադրողական ուժերի մակարդակին ու դրանց զարգացման պահանջներին։ Կոլտնտեսությունը գյուղացիների անձնական շահերը ճիշտ կերպով զուգորդում է հասարակական, համաժողովրդական շահերին, լայն հնարավորություններ է ստեղծում բարձրացնելու կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը և նպաստում աշխատանքի արտադրողականության անընդհատ աճմանը։ Կոլտնտեսային կարգը ապահովում է սոցիալիստական կուտակումը և գյուղատնտեսության ընդլայնված վերարտադրությունը։ Բավական է ասել, որ ՍՍՌՄ-ում աշխատանքի արտադրողականությունը կոլտնտեսային հանրային տնտեսություններում, նախահեղափոխյան շրջանի համեմատությամբ, ներառյալ և կալվածատիրական տնտեսությունները, բարձրացել է ավելի քան 4 անգամ, գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1913

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 33, էջ 563։

2 Նույն տեղում, էջ 564։

3 Ն. Ս. Խրուշչով, Կոլտնտեսային կարգի հետագա զարգացման և մեքենա-տրակտորային կայանների վերակազմության մասին, էջ 40։

թվականի համեմատությամբ, 1960 թվականին աճեց ավելի քան 2,2 անգամ, իսկ 1953 թվականի համեմատությամբ՝ 1,6 անգամ։ Երկրում ամբողջությամբ վերցրած կոլտնտեսությունների բաժինը կազմում է հացահատիկի պետական գնումների 57%, շաքարի ճակնդեղինը՝ 93%, բամբակի հումքի՝ 85%, վուշի՝ 93%, արևածաղկի՝ 86%, մոտ 45—60%՝ բանջարեղեն, կարտոֆիլի և անասնաբուծական հիմնական մթերքների։ Կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը 1959 թվականի 6,98 միլիարդ ռուբլուց (համապատասխան տարիների գներով) 1960 թվականին հասան 19,16 միլիարդ ռուբլու, կոլտնտեսությունների դրամական եկամուտները համապատասխանորեն 4,96 միլիարդ ռուբլուց աճեցին մինչև 12,91 միլիարդ ռուբլի։ Կոլտնտեսային եկամուտների նույնպիսի զգալի աճ տեղի ունեցավ նաև մեր ռեսպուբլիկայում։ Եթե 1953 թ. կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը կազմում էին 100,8 միլիոն ռուբլի, ապա 1960 թվականին դրանք հասան 158,9 միլիոն ռուբլու[4]։

Կոլտնտեսային կարգերը ոչ միայն չեն սպառել արտադրության հետագա զարգացման ու ավելացման իրենց հնարավորությունները, այլ ընդհակառակը, ինչպես սովխոզները, այնպես էլ կոլտնտեսություններն արտադրության մերելքի անսպառ ռեզերվներ ունեն։ Խնդիրը ոչ թե նրանում է, որ ժխտվի կոլտնտեսային կարգերի դերը սոցիալիզմից կոմունիզմին անցնելու գործում, այլ ամեն կերպ օգտագործվի կոլտնտեսային կարգի ունեցած հնարավորություններն ու առավելությունները, քանի որ կոլտնտեսային կարգի տնտեսական ծաղկումը պայմաններ է ստեղծում, որ կոլտնտեսային սեփականությունը աստիճանաբար մոտենա, իսկ հետագայում նաև ձուլվի համաժողովրդական սեփականության հետ դառնալով միասնական կոմունիստական սեփականություն։

Իհարկե, չի կարելի գտնել, թե կոլտնտեսային կարգերը իրենց ներկա վիճակով միշտ էլ կարող են բավարարել գյուղում արտադրողական ուժերի զարգացման պահանջները։ Ընդհակառակը, այդ կարգերը գտնվում են իրենց զարգացման ու կատարելագործման պրոցեսում։ ՄՏ կայանների վերակազմումը և արտադրության գործիքները կոլտնտեսություններին վաճառելը, պլանավորման նոր կարգի ընդունումը, գյուղի աշխատավորների նյութական շահագրգռվածության լենինյան սկզբունքի հետևողական կիրառումը և պարտիայի ու կառավարության մյուս միջոցառումների իրականացումը կարևոր էտապ հանդիսացան կոլտնտեսային կարգերի զարգացման ասպարեզում։

Այս բոլորը սկիզբ դրին սոցիալիզմից կոմունիզմին անցնելու շրջանում կոլտնտեսային կարգի զարգացման նոր փուլին։

Ներկա էտապում այդ նոր փուլը էականորեն տարբերվում է նրա զարգացման նախորդ փուլերից։ Ինչպես նշում է ընկեր Ն. Ս. Խրուշչովը,— կոլտնտեսային կարգի զարգացման նոր փուլը տարբերվում է նրանով, որ կոլտնտեսություններն իրենց մեծամասնությամբ դարձել են խոշոր և տնտեսապես ամուր տնտեսություններ, որոնք արտադրությունը վարում են գիտության և առաջավոր փորձի լայն կիրառման հիման վրա. նրանք տեխնիկապես հագեցված են զգալիորեն ավելի լավ, քան առաջ. նրանք ապահովված են որակյալ կադրերով, որոնք ընդունակ են հմտորեն օգտագործելու արդի տեխնիկան

---

4 Տե՛ս ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների 1953 և 1960 թթ. տարեկան հաշվետվությունները։

և տնտեսության նվաճումները, զգալիորեն աճել են կոլտնտեսությունների եկամուտները և բարձրացել է կոլտնտեսականների նյութական բարեկեցությունը։

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման հետ միասին կոլտնտեսային կարգերը ունենալու են իրենց հետագա զարգացումն ու կատարելագործումը։ Արտադրողական ուժերի հետագա աճը, արտադրության կազմակերպման ու տնտեսավարման մեթոդների բարելավումը, աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացումը, բաշխման սոցիալիստական սկզբունքների կատարելագործումը նշանավորելու են կոլտնտեսային կարգերի, ինչպես և սովխոզների զարգացման տեմպերի բարձր աստիճան։ Այդ բոլորի հիման վրա կոլտնտեսություններն ու սովխոզները, իրենց արտադրական հարաբերություններով, աշխատանքի բնույթով, աշխատավորների բարեկեցության ու կուլտուրական մակարդակով, ավելի ու ավելի կդառնան կոմունիստական տիպի ձեռնարկություններ։

Հետևապես, սխալ է այն տեսակետը, որ կոմունիզմի միասնական սեփականությունը առաջանալու է կոլտնտեսությունների սովխոզացման ուղիով. ՍՄԿՊ Ծրագրի նախագծում նշված է, որ դեպի կոմունիզմ գյուղի հետագա առաջընթացը տեղի կունենա սոցիալիստական տնտեսության երկու ձևերի՝ կոլտնտեսությունների ու սովխոզների զարգացման և կատարելագործման ճանապարհով։

ՍՄԿՊ Ծրագրի նախագծում առանձնապես նշված է, որ կոլտնտեսությունը գյուղացիության համար կոմունիզմի դպրոց է։

Կոլտնտեսային շինարարության գործում առանձնակի նշանակություն ունի տնտեսապես թույլ կոլտնտեսությունների ուժեղացման հարցը։

Հայտնի է, որ առաջավոր և միջակ տնտեսությունների հետ միասին կան զգալի չափով տնտեսապես ետ մնացող կոլտնտեսություններ, որոնք ունեն արդյունաբերության աննշան ծավալ, ցածր եկամուտներ, գրեթե ոչինչ չեն առանձնացնում անբաժանելի ֆոնդերի լրացման համար և շատ քիչ ու անկայուն են վճարում կոլտնտեսականներին՝ իրենց աշխատանքի դիմաց։ Առանց այդ տնտեսությունների ուժեղացման, նրանց տնտեսապես ամրապնդման, դժվար է իրականացնել գյուղատնտեսության խնդիրները։

Որոշ տնտեսագետներ կարծում են, որ այդպիսի տնտեսությունները պետք է բարձրացնել միայն պետության հաշվին. նրանց պետք է տալ երկարաժամկետ վարկ, ձրի արտադրության միջոցներ և այլն։ Ոմանք էլ կարծում են, որ այդ պետք է հաղթահարել ի հաշիվ առաջավոր կոլտնտեսությունների, այսինքն՝ վերջիններիցս վերցնել 1-ին դիֆերենցիալ ռենտայի միջոցով ստացած եկամտի մի մասը և տալ այդ ետ մնացող տնտեսություններին։ Այս երկու տեսակետներն էլ տնտեսությունների զարգացման գործում հաշվի չեն առնում տնտեսության ներքին հնարավորությունների մոբիլիզացումն ու նրանց օգտագործումը։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայիս տնտեսապես թույլ կոլտնտեսությունների զգալի մասը ժամանակին եղել են միջակ և նույնիսկ ուժեղ տնտեսություններ։ Նրանք թուլացել են մեծ մասամբ շնորհիվ վարչա-տնտեսական թույլ աշխատանքների։ Այսպիսի տնտեսություններում թույլ է տնտեսության ղեկավարումը, աշխատանքի կազմակերպումը, չի իրականացվում արտադրության պրոցեսում կոլտնտեսականների նյութական

շահագրգռվածության սկզբունքը, լրացուցիչ վարձատրության սկզբունքը, վատ են օգտագործվում տնտեսության ներքին հնարավորությունները։ Այդ բոլորի հետևանքը լինում է այն, որ ընկնում է աշխատանքի կարգապահությունը և նույնիսկ որոշ կոլտնտեսականներ թողնում են կոլտնտեսությունը և գնում այլ, ավելի եկամտաբեր աշխատանք փնտրելու։

Այս բոլոր թերությունների վերացումը հիմնական նախադրյալ կհանդիսանա հաղթահարելու այդ տնտեսությունների ետ մնալը։ Այս գործում կարևոր նշանակություն ունի գիտության նվաճումների, առաջավոր տնտեսությունների փորձի ներդրումը։ Այդպիսի տնտեսություններին պետք է ցույց տալ նաև գործնական օգնություն։ Հայտնի է, որ մինչև վերջին ժամանակները գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումները զգալի չափով կատարվում էին Արարատյան հարթավայրում։ Այդ հիմնավորվում էր նրանով, որ այդ զոնայում կապիտալ ներդրումները տալիս էին ավելի մեծ արդյունք։ Գյուղատնտեսական տեխնիկայի մեծ մասը կենտրոնացված է այդ զոնայում։ Այսպես, օրինակ, ինչպես ցույց են տալիս մեր կողմից կատարած հաշվարկները, գյուղատնտեսական տեխնիկայի բաշխումը կոլտնտեսություններում՝ ըստ գյուղատնտեսական զոնաների, ունի հետևյալ պատկերը.

Յուրաքանչյուր 100 հեկտար վարելահողին կոլտնտեսությանն ընկնում է տրակտոր (15 ուժ) 1960 թ.

Արարատյան հարթավայր	1,76
Սևանի ավազան	0,47
Զանգեզուր	0,37

Ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում եղած թրթուռավոր տրակտորների 22,2 և անիվավոր տրակտորների 56,3 տոկոսը կենտրոնացված էր Արարատյան հարթավայրի կոլտնտեսություններում։

ՍՄԿՊ Ծրագրի նախագծում ասվում է, որ բոլոր կոլտնտեսությունները, որոնց թվում և տարբեր բնակլիմայական գոտիներում գտնվողները, պետք է դրվեն տնտեսական հավասար պայմաններում, առանձնապես նյութա-տեխնիկական ֆոնդերի բաշխման դեպքում։ Ելնելով դրանից, պետք է հատուկ ուշադրություն դարձնել նախալեռնային և լեռնային գոտիներում գտնվող տնտեսությունների նյութա-տեխնիկական մատակարարման վրա, գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ, պարարտանյութեր և այլ միջոցներ առաջին հերթին տալ տնտեսապես թույլ կոլտնտեսություններին, ավելի մեծ կապիտալ ներդրումներ կատարել ռեսպուբլիկայի նախալեռնային և լեռնային շրջաններում։

2. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ծրագրի նախագծում նշված է, որ գյուղատնտեսության վերելքի և գյուղատնտեսության արտադրանքի նկատմամբ երկրի աճող պահանջների բավարարման գլխավոր ուղին բազմակողմանի մեքենայացումն ու հետևողական ինտենսիֆիկացումն է։ Շնորհիվ պարտիայի ու կառավարության կողմից կիրառվող միջոցառումների, վերջին տարիներում զգալի չափով բարձրացավ գյուղատնտեսության մեքենայացումը, գյուղատնտեսության մեջ կիրառվող էներգետիկան։ Եթե 1953 թ. ՍՍՌՄ-ում 100 հեկտար վարելահողին ընկնում էր 58 ձիաուժ էներգիա, ապա 1958 թ. այդ հասավ 72-ի։ Գյուղատնտեսության

մեջ զբաղված մեկ աշխատողին 1953 թ. ընկնում էր 2,6, իսկ 1958 թ. 4,4 ձիաուժ էներգիա։ Գյուղատնտեսությունը սոցիալիստական արդյունաբերությունից ստացավ ավելի կատարելագործված տեխնիկա։ Այդ բոլորի հետևանքով բարձրացավ գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակը։ Այդ ասպարեզում մեծ առաջադիմություն է տեղի ունեցել նաև մեր ռեսպուբլիկայում։

Բարձրացել է հողագործության կուլտուրան, կոլտնտեսականների ու սովխոզների բանվորների տեխնիկական կրթության մակարդակը։

Սակայն սոցիալիզմից կոմունիզմին անցնելու շրջանում անհրաժեշտ է որակական խոշոր փոփոխություն մտցնել գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազայի բնագավառում։ Ծրագրի նախագծում նախատեսվում է գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականությունը տասը տարվա ընթացքում բարձրացնել առնվազն 2,5 անգամ, իսկ քսան տարում՝ 5—6 անգամ։ Գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացումը ամենից առաջ կապահովի գյուղատնտեսության մեքենայացման որակական նոր աստիճան, որը կհամապատասխանի կոմունիստական հասարակարգին։

Գյուղատնտեսության նախկին մեքենայացումն իր պրոգրեսիվ կողմերի հետ միասին ուներ մի շարք սահմանափակումներ։

Մեքենաները ծառայում էին աշխատանքի առանձին պրոցեսների համար, գրեթե բացակայում էր կոմպլեքսային մեքենայացումն ու ավտոմատացումը։

Ի տարբերություն արդյունաբերության մեջ գործող մեքենաների, գյուղատնտեսական մեքենաների ինչպես մեքենայի տեղափոխման արագությունը, այնպես և բանվորական մասի արագությունը ցածր է, նրանց շարժումը հավասար է ձիու շարժման արագությանը (4—6 կմ ժամ)։

Այդ մեքենաների օգտագործումը դեռևս պահանջում է մարդկանց մեծ քանակի ֆիզիկական աշխատանք, ինչպես և աշխատողի ֆիզիկական ու մտավոր ուժի լարվածությունը։

Մեխանիկական ուժի հիմնական աղբյուրը ոչ թե էլեկտրականությունն է, այլ ներքին այրման շարժիչները։

Գյուղատնտեսության մեխանիզատորները աշխատում են բացօթյա՝ փոշու, կեղտի, անձրևի, քամու պայմաններում։ Նրանց աշխատանքը խիստ տարբերվում է գործարանի բանվորների աշխատանքից։ Ծրագրի նախագծում պահանջվում է, որպեսզի յուրաքանչյուր գոտու պայմաններին համապատասխանող մեքենաների սիստեմներ ստեղծվեն։ Գյուղատնտեսության զարգացման կարևորագույն խնդիրներից մեկը՝ էլեկտրիֆիկացումն է։ Նախատեսված է առաջին տասնամյակում էլեկտրիֆիկացիայի բազայի վրա իրականացնել գյուղատնտեսության կոմպլեքսային մեքենայացումը։ Դա հնարավորություն կտա լիկվիդացնել ձեռքի աշխատանքը ինչպես հիմնական, նույնպես և օժանդակ ճյուղերում։ Արմատավորելու են հողագործության և անասնապահության գիտականորեն հիմնավորված սիստեմներ, սնտեսությունների ավելի խոր և հաստատուն մասնագիտացում և այլն։ Մեծ ծավալ է ստանալու գիտության նվաճումների ներդրումը գյուղատնտեսության մեջ։

Ծրագրի նախագծում ասված է, որ «կոմունիստական շինարարության մեջ անհրաժեշտ է լիովին օգտագործել ապրանք-դրամական հարաբերությունները, քան այն նոր բովանդակության, որը հատուկ է նրանց սոցիալիզմի ժա-

[illegible]

մանակաշրջանում»[5]: Հայտնի է, որ դեռ մոտ անցյալում որոշ էկոնոմիստներ ժխտում էին ապրանքի, հետևապես և ապրանքա-դրամական հարաբերությունների գոյությունը նույնիսկ սոցիալիզմի ժամանակ։ Տարածված էր նաև այն տեսակետը, որ կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելը տեղի է ունենալու ապրանքաշրջանառությունը մթերափոխանակությամբ փոխարինելու միջոցով։ Այսպիսի հայացքների անհիմն լինելը ցույց է տալիս կոլտնտեսությունների և պետության մեջ ավելի ու ավելի ծավալվող ապրանքաշրջանառությունը։

Ծրագրի նախագծում հատուկ ուշադրություն է դարձվում ապրանքա-դրամական հարաբերությունների խելացի օգտագործման վրա։ Հաճախ տնտեսությունը սկսում է թուլանալ այն պատճառով, որ շատ վատ են օգտագործում ապրանքա-դրամային հարաբերությունները, արժեքի օրենքը։ Պետք է նկատի ունենալ, որ կոլտնտեսության արտադրական ու ֆինանսական գործունեությունը սերտ կապված են իրար հետ, ունեն փոխպայմանավորվածություն և փոխազդեցություն։ Քիչ չեն դեպքեր, երբ ճշտորեն հաշվի չեն առնվում արտադրանքի արտադրության վրա կատարած արտադրական ծախքերը, ամորտիզացիայի հատկացումները, կուտակման և սպառման ֆոնդերի հարաբերությունը, պետության հանդեպ ունեցած իրենց ապրանքա-դրամական պարտավորությունների կատարումը և այլն։ Դեռևս շատ թույլ է տնտհաշվարկի արմատավորումը կոլտնտեսություններում և սովխոզներում։

Այդ գործում մեծ դեր ունեն համապատասխան գիտահետազոտական ինստիտուտները։ Սակայն չի կարելի նորմալ համարել այն, որ դեռևս վերջնականապես չի որոշված կոլտնտեսային արտադրության արտադրանքի ինքնարժեքի որոշման մեթոդիկան։ Ստեղծվել է այնպիսի դրություն, երբ կոլտնտեսությունները արտադրական ծախքերի հաշվառման, տարեկան բալանս կազմելու, տնտհաշվարկը ներդնելու և իրականացնելու, ինչպես և ներտնտեսային այլ գործունեության ժամանակ պետք է գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքը որոշեն աշխատանքային փաստացի ծախսերով, իսկ տարեկան հաշվետվության մեջ այն տան պայմանական սովխոզային ծախսերով։

Դեռևս կատարելագործված չեն պլանային գնման գները. նրանք դեռևս չեն համապատասխանում գյուղատնտեսական արտադրության տարբեր պայմաններին։ Գնման գները պետք է այնպիսին լինեն, որպեսզի ապահովեն ինչպես կոլտնտեսությունների, այնպես և համաժողովրդական տնտեսության ընդլայնված վերարտադրության շահերը։ Պարզ ասած, նրանք պետք է ապահովեն տվյալ ապրանքի արտադրության վրա կատարած ծախքերը և հավելյալ արդյունքի մի մասը կոլտնտեսության համար, ինչպես և նրանց միջոցով հավելյալ արդյունքի մյուս մասի անցումը պետությանը։

3. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՁԵՎԵՐԻ ՄԵՐՁԵՑՄԱՆ ՈՒ ՀԵՏԱԳԱ ԶՈՒԼՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ՍՄԿՊ Ծրագրի նախագծում նշված է, որ կոմունիզմը անդասակարգ հասարակարդ է՝ արտադրության միջոցների միասնական համաժողովրդական

5 Նախագիծ. Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ծրագիրը. Հայպետհրատ. 1961, էջ 105։

սեփականությամբ։ Այդ նշանակում է, որ սոցիալիստական սեփականության պետական-համաժողովրդական և կոոպերատիվ-կոլտնտեսային ձևերի փոխարեն լինելու է սեփականության մեկ—կոմունիստական ձև։ Սակայն ինչպե՞ս է առաջանալու սեփականության այդ ձևը։ Եթե նախկինում այդ հարցը զուտ տեսական բնույթ ուներ, ապա ներկայումս նա ունի ոչ միայն տեսական, այլև խիստ գործնական բնույթ։ Կոլտնտեսային սեփականության առաջացման ու զարգացման հարցը միշտ էլ հանդիսացել է կոլտնտեսային շինարարության հիմնական հարցը, իսկ կոլտնտեսային շինարարության պրոբլեմը մնում է ժողովրդական տնտեսության ամենից դժվար և բարդ պրոբլեմներից մեկը։

Կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելով և մեկ միասնական կոմունիստական սեփականության ստեղծումով հիմնականում կավարտվեն Վ. Ի. Լենինի կոոպերատիվ պլանի խնդիրները։ Սեփականության այդ երկու ձևերի մերձեցումն ու նրանց հետագա միաձուլումը կհանդիսանա ռևոլյուցիոն հեղաշրջում, որը կբերի սոցիալիստական դասակարգերի, քաղաքի ու գյուղի էական տարբերությունների վերացումն ու կոմունիստական արտադրական հարաբերությունների հաստատումը։

Այս տեսակետից խոշոր նշանակություն է ստանում կոմունիստական, մեկ միասնական սեփականության ձևավորման հարցը։ ՍՄԿՊ XXI համագումարում ընկեր Ն. Ս. Խրուշչովը նշեց, որ կոմունիստական շինարարության խնդիրների լուծման մեջ տեսական ու գործնական մեծ նշանակություն է ստանում սոցիալիստական սեփականության կոլտնտեսային և համաժողովրդական ձևերի զարգացման ու մերձեցման ուղիների հարցը։

Այդ հարցի լուծման կապակցությամբ, մեր իրականության մեջ, տնտեսագետների, ինչպես և փիլիսոփաների մոտ առաջացան տարբեր տեսակետներ։ Ոմանք, հիմնվելով որոշ կոլտնտեսությունների սովխոզացման պրակտիկայի վրա, գտնում էին, որ համաժողովրդական միասնական սեփականության ստեղծման գլխավոր ուղին կոլտնտեսությունների սովխոզացումն է։ Այդ տեսակետի կողմնակիցները հաշվի չէին առնում գյուղատնտեսությունը կոմունիզմի կառուցման մեջ ընդգրկելու առանձնահատկությունները, որը տրված է Լենինի կոոպերատիվ պլանում։ Նրանք նույնիսկ անտեսել էին, որ առաջավոր կոլտնտեսությունները աշխատանքի արտադրողականության մակարդակով ետ չեն մնում սովխոզներից։ Նրանք հաշվի չեն առնում, որ այդ գծին համաձայն չէին լինի նույնիսկ այն կոլտնտեսականները, որոնք վատ եկամուտ չէին ստանում կոլտնտեսություններից, միաժամանակ այդ ուղին պահանջում էր կպահանջեր վիթխարի ծախսումներ։

Ոմանք կարծում էին, որ կոլտնտեսային և համաժողովրդական սեփականության մերձեցմանը կարելի է հասնել կոլտնտեսություններում և սովխոզներում գործող աշխատանքի վարձատրման տարբերությունների մեխանիկական վերացման միջոցով։ Նրանց թվում էր, որ եթե վերացվեն տնտեսության այդ երկու ձևերում եղած վարձատրության տարբերությունները, ապա կվերանա ինչպես սեփականության այդ երկու ձևերի, այնպես և բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության միջև եղած տարբերությունները։ Այս տեսակետի կողմնակիցները մոռանում էին, որ չի կարելի վարձատրության այդ տարբերությունները վերացնել, քանի դեռ չի վերացված նրանց միջև եղած աշխատանքի արտադրողականության մակարդակի տարբերությունը։

Սխալ է նաև այն տեսակետը, որ մեկ միասնական սեփականություն կարելի է ստեղծել կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը ազգայնացնելու միջոցով, այն դարձնելով համաժողովրդական սեփականություն։ Օրինակ, Լենինգրադի էկոնոմիստներից մեկը՝ Վ. Ֆ. Զվոնկովը գրում է. «Այժմ ամեն մի կոլտնտեսության անբաժանելի ֆոնդերը իրականում պատկանում են ամբողջ ժողովրդին»[6]։ Այդ տեսակետի կողմնակիցները մոռանում են, որ եթե կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերը պատկանում են ողջ հասարակությանը, ապա կոլտնտեսություններն իրենց հիմնական միջոցները՝ տրակտորներ, կոմբայններ, գյուղատնտեսական կառույցներ և այլն, պետք է վերադարձնեն պետությանը։ Հայտնի է, որ կոլտնտեսային արտադրության կուտակման և ընդլայնված վերարտադրության հիմնական աղբյուրը կոլտնտեսային անբաժանելի ֆոնդերն են։ Նրանցով է որոշվում կոլտնտեսության զարգացումն ու կոլտնտեսականների հիմնական եկամուտների աճը։ Անբաժանելի ֆոնդերի աճը միաժամանակ պայմանավորում է կոլտնտեսային սեփականության համայնացման մակարդակի բարձրացումը։ Այս բոլորից հետո հարց է առաջանում, ի՞նչ կմնա կոլտնտեսային սեփականությունից, եթե անբաժանելի ֆոնդերը համարենք համաժողովրդական սեփականություն։ Իհարկե ոչինչ։ Այս տեսակետը ևս, ինչպես տեսականորեն, այնպես և պրակտիկայում չի հիմնավորվում։

Ընկեր Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ XXI համագումարում նշեց, որ «սեփականության ձևերը փոխվում են ոչ թե քմահաճորեն, այլ զարգանում են էկոնոմիկայի օրենքների հիման վրա, կախված են արտադրողական ուժերի զարգացման բնույթից և մակարդակից։ Կոլտնտեսային սեփականության հանրայնացման մակարդակի բարձրացումը, նրա մերձեցումը համաժողովրդական սեփականությանը և նրանց միջև սահմանագծերի աստիճանաբար վերացումը տեղի կունենա արտադրողական ուժերի հետագա զարգացման հետ միասին։

Ծրագրի նախագծում նշված է, որ «արտադրողական ուժերի աճման հետ միասին, կզարգանան միջկոլտնտեսային արտադրական կապերը, տնտեսության հանրայնացման պրոցեսը դուրս կգա առանձին կոլտնտեսությունների շրջանակներից»։

Կոլտնտեսային շինարարության ներկա էտապը բնորոշ է կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականության ձևի զարգացմամբ ու կատարելագործմամբ։ Արագ տեմպերով աճում են կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերն ու դրամական եկամուտները, բարձրանում է կոլտնտեսային արտադրության հանրայնացման մակարդակը։ Այդ հիման վրա կոլտնտեսություններում օբյեկտիվորեն երևան եկավ նոր երևույթ՝ միջկոլտնտեսային հարաբերություններ, որոնք հանդիսանում են կոլտնտեսային սեփականության և կոլտնտեսային արտադրության հետագա կատարելագործման ուղիներից մեկը։

Միջկոլտնտեսային արտադրական կապերի առաջացումն ու նրանց զարգացումը նշանավորում է կոլտնտեսային շինարարության նոր էտապ, երբ կոլտնտեսությունների էկոնոմիկան այն աստիճանի է ամրապնդվել, որ կոլտնտեսությունները բացի իրենց պահանջները բավարարելուց, որոշ չափի միջոցներ են առանձնացնում՝ մասնակցելու միջկոլտնտեսային արտադրությա-

[6] В. Ф. Звенков. Совершенствование производственных отношений в период развернутого строительства коммунизма, Ленинград, 1960 г., стр. 19.

նը։ Միջկոլտնտեսային արտադրական կապերի արագ զարգացման գլխավոր շարժիչը կոլտնտեսային արտադրության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացումն է։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջկոլտնտեսային կազմակերպություններում շինարարության, արտադրության արտադրանքի ինքնարժեքը զգալիորեն ցածր է, քան կոլտնտեսություններում։ Շնորհիվ իրենց պրոգրեսիվ բնույթի, կարճ ժամանակաընթացքում ընդլայնվեցին տարբեր տիպի արտադրական կապեր՝ Միության գրեթե բոլոր ռեսպուբլիկաներում։ Ուկրաինական ՍՍՌ-ում գյուղատնտեսական արտելների գրեթե 90 տոկոսն ընդգրկվել են 1400 տարբեր տիպի միջկոլտնտեսային կազմակերպություններում։

Մեր ռեսպուբլիկայում առաջին միջկոլտնտեսային արտադրական կապերը ստեղծվեցին էլեկտրակայանների, ջրանցքների, ճանապարհների կառուցումների գծով։ Միջկոլտնտեսային էլեկտրակայանների կառուցումը մեզ մոտ սկսվեց 1949—1954 թվականներին։ Այդպիսի էլեկտրակայաններ կառուցվեցին Գորիսի, Շամշադինի, Ղափանի, Նոյեմբերյանի, Հոկտեմբերյանի և այլ շրջաններում։ Միջկոլտնտեսային ասֆալտապատված ճանապարհներ կառուցվեցին Արտաշատի, Էջմիածնի և այլ շրջաններում, ջրանցքները կառուցվեցին Արտաշատի, Կոտայքի և մյուս շրջաններում։

Սակայն միջկոլտնտեսային արտադրական կապերը ռեսպուբլիկայում առանձնապես ավելի լայն զարգացում ստացան ՍՄԿՊ XXI համագումարից հետո։ 1958—1960 թվականներին միջկոլտնտեսային խորհուրդներ ստեղծվեցին ռեսպուբլիկայի 14 շրջաններում։ Ներկայումս ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների ավելի քան 20 տոկոսը ընդգրկված են միջկոլտնտեսային կազմակերպություններում։

Ռեսպուբլիկայի այն կոլտնտեսությունները, որոնք ցանկանում էին մասնակցել միջկոլտնտեսային արտադրական կազմակերպություններում, ընտրեցին իրենց լիազորները՝ շրջանային միջկոլտնտեսային շինարարական ժողովներին մասնակցելու համար։ Վերջիններս ստեղծեցին շրջանային միջկոլտնտեսային խորհուրդներ։

Կարճ ժամանակում ոչ միայն արագ տեմպերով ընդլայնվեց միջկոլտնտեսային արտադրական կազմակերպությունների ցանցը, այլև նրանց գործունեությունը։

Շահումյանի շրջանի միջկոլտնտեսային խորհուրդը, որը ստեղծվեց 1959 թվականին, կարճ ժամանակաընթացքում զգալի աշխատանքներ կատարեց։ Խորհուրդն իր ուժերով և միջոցներով կառուցեց շինգործնական բակը, որտեղ տեղավորված է փայտամշակման արհեստանոց, դարբնոց, սղոցարան, պահեստներ, խորհրդի գրասենյակը և այլ օբյեկտներ, կոլտնտեսությունների համար կառուցեց երկու դպրոց, ակումբ, թռչնանոցներ, պահեստներ, անասնապահական շենքեր, ջերմատուն, գրադարան, միջկոլտնտեսային խոշոր թռչնաբուծական ֆաբրիկա, խոզերի գիրացման և ինկուբատորային կայաններ և այլ օբյեկտներ։

Էջմիածնի միջկոլտնտեսային խորհուրդը կառուցում է սննդի խոշոր կոմբինատ՝ 530 հազար ռուբլու արժողությամբ։ Կոմբինատը արտադրելու է պտուղների և բանջարեղենի պահածոներ, խաղողի հյութ, չորացրած մրգեր և այլ տեսակի պատրաստի մթերքներ։ Կոմբինատն ունենալու է թարմ մրգեր պահպանելու հատուկ ցեխեր։ Խորհուրդը կառուցելու է միջկոլտնտեսային

խոշոր ջերմատուն։ Բացի միջկոլտնտեսային օբյեկտներից, խորհուրդը կոլտնտեսությունների համար կառուցում է հիվանդանոցներ, ծննդաբերական տուն, թռչնաբուծական ֆերմաներ, դպրոցներ, պիոներական ճամբարներ և այլ օբյեկտներ։ Յոթնամյակում խորհրդի կողմից կոլտնտեսությունների համար կառուցվող օբյեկտների ընդհանուր արժեքը հասնում է մոտ 470 հազար ռուբլու։

Զգալի աշխատանք է տարել Արտաշատի միջկոլտնտեսային խորհուրդը։ 1960 թվականին խորհրդի շինարարական աշխատանքները հասան 450.0 հազար ռուբլու։ Իր գոյության այս երեք տարիներում խորհուրդը կառուցեց հիվանդանոց, ստադիոն, գործնական բակ և այլ օբյեկտներ։

Ռեսպուբլիկայում կազմակերպված միջկոլտնտեսային խորհուրդներից է Հոկտեմբերյանի շրջանի միջկոլտնտեսային խորհուրդը։ Բացի միջկոլտնտեսային էլեկտրակայանից, խորհուրդը կառուցել է ինկուբատորային կայան, ավարտվում է ջրմուղի կառուցումը, մասնակից կոլտնտեսությունների համար կառուցվում են արտադրական, կուլտուր-լուսավորական տարբեր տիպի օբյեկտներ։

Ներկայումս ռեսպուբլիկայի 14 շրջանների բոլոր միջկոլտնտեսային խորհուրդները կառուցում են միջկոլտնտեսային և կոլտնտեսությունների համար տարբեր օբյեկտներ։

Կարճ ժամանակաընթացքում ռեսպուբլիկայի միջկոլտնտեսային խորհուրդները կատարեցին զգալի աշխատանք։ Բավական է նշել, որ ներկայումս ռեսպուբլիկայում կառուցված են կամ կառուցման պրոցեսում են գտնվում խոշոր ջերմատուն, գյուղատնտեսական մթերքների վերամշակման գործարան, թռչնաբուծական խոշոր ֆաբրիկա և մի քանի խոշոր ֆերմաներ, հիվանդանոցներ, ստադիոն, էլեկտրակայաններ, ինկուբատորներ և այլ արտադրական, կուլտուր-կենցաղային օբյեկտներ։ Շահումյանի, Էջմիածնի, Արտաշատի, Հոկտեմբերյանի, Ախուրյանի միջկոլտնտեսային կազմակերպությունները մեծ ծավալի շինարարություն են կատարել մասնակից կոլտնտեսությունների համար։ Նրանք կառուցել են դպրոցներ, դպրոց-ինտերնատներ, կովանոցներ, թռչնանոցներ, պահեստներ, ֆիզկուլտ հրապարակներ, կուլտուրայի տներ և բազմաթիվ այլ օբյեկտներ։ 1960 թվականին նրանք կատարեցին 2,5 միլիոն ռուբլու շինարարություն։

Միջկոլտնտեսային կազմակերպությունները կառուցում են այնպիսի օբյեկտներ, որոնք իրենց ծավալով ու բնույթով դուրս են գալիս առանձին կոլտնտեսային սեփականության բնույթից, համաժողովրդական բնույթ են ստանում։

Մեր ռեսպուբլիկայի համար նպատակահարմար է, որ միջկոլտնտեսային արտադրական կապերի զարգացումը գնա ոռոգման ցանցի, գյուղատնտեսական մթերքների վերամշակման գործարանների, անասունների արհեստական սերմնավորման կայանների, ջերմոցների և այլ օբյեկտների կառուցման ուղղությամբ։ Հետագայում միջկոլտնտեսային կազմակերպությունները իրենց աշխատանքները պետք է ընդլայնեն գյուղերի բարեկեցության ուղղությամբ։

Չնայած այսպիսի համաժողովրդական, համապետական նշանակություն ունեցող աշխատանքների, միջկոլտնտեսային կազմակերպությունները դեռևս իրենց արժանի ուշադրությանը չեն արժանացել համապատասխան կազմակերպությունների կողմից։ Դեռևս միջկոլտնտեսային կազմակերպությունները

վատ են սպասարկվում շինանյութերով, համապատասխան մեքենաներով և մեխանիզմներով և այլ անհրաժեշտ նյութերով։ Անմխիթար դրության մեջ է գտնվում նախագծերով և համապատասխան փաստաթղթերով ապահովման գործը։ Դեռևս Պետբանկի ռեսպուբլիկական բաժանմունքները միջկոլտնտեսային կազմակերպություններին բաց չեն թողնում երկարատև վարկ, որը վերին աստիճանի դժվարացնում է այդ կազմակերպությունների աշխատանքները։ Մեզ թվում է, որ անհրաժեշտ է, որպեսզի Պետբանկը միջկոլտնտեսային կազմակերպություններին երկարատև վարկով ապահովի նույն պայմաններով, ինչ պայմաններով օգտվում են պետական և կոոպերատիվ մյուս շինարարական կազմակերպությունները։ Միջկոլտնտեսային կազմակերպություններին արտադրական օգնություն ցույց տալու համար, անհրաժեշտ է, որպեսզի պլանավորող օրգանները հաշվի առնեն միջկոլտնտեսային կազմակերպությունների պահանջները՝ շինանյութերի, մեքենաների և մեխանիզմների նկատմամբ։

Միությանմեջ դեռևս չկա մի հատուկ օրգան, որը ղեկավարի միջկոլտնտեսային կազմակերպությունների գործունեությունը, զբաղվի նրանց աշխատանքների պլանավորմամբ ու կոորդինացիայով, ինչպես և մատակարարման գործով։ Նպատակահարմար է ստեղծել այդպիսի օրգան։

Միջկոլտնտեսային արտադրական կապերը իրենցից ներկայացնում են կոոպերացման ավելի բարձր տիպ, քան գյուղատնտեսական արտելը։ Նրանք արտադրական միջոցների, աշխատանքի հանրայնացման, ինչպես և արտադրության կազմակերպման ձևերով ավելի բարձր են, քան կոլտնտեսությունները։ Սակայն, այդ չի նշանակում, որ միջկոլտնտեսային արտադրական կապերը կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու հիմնական ուղին է։

ՍՄԿՊ Ծրագրի նախագծում նշված է, որ կոլտնտեսությունների և սովխոզների հետագա զարգացման պրոցեսում կուժեղանան նրանց արտադրական կապերը միմյանց միջև և տեղական արդյունաբերական ձեռնարկությունների հետ, կընդլայնվի տարբեր արտադրությունների համատեղ կազմակերպման պրակտիկան, որը կապահովի տարվա ընթացքում աշխատուժի և արտադրական ռեսուրսների առավել հավասարաչափ ու լրիվ օգտագործումը, կբարձրացնի հանրային աշխատանքի արտադրողականությունը։

Կոլտնտեսությունների տնտեսական վերելքը թույլ կտա կատարելագործել ներկոլտնտեսային հարաբերությունները՝ բարձրացնել արտադրության հանրայնացման աստիճանը՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման հետ միասին, աշխատանքի նորմավորումը, կազմակերպումն ու վարձատրությունը աստիճանաբար մոտենալու է պետական ձեռնարկություններում ստեղծված մակարդակին ու ձևերին, իրականանալու է աշխատանքի ամենամսյա երաշխավորված վարձատրությունը։

Կոլտնտեսային հանրային արտադրության զարգացումը հնարավորություն կտա կոլտնտեսականների բոլոր պահանջները բավարարել հանրային տնտեսությունից։

Կոլտնտեսականի օժանդակ տնտեսությունը աստիճանաբար կկորցնի իր նշանակությունը։

Աշխատանքի արտադրողականության աճի առավել արագ տեմպերի հիման վրա կոլտնտեսականների ռեալ եկամուտները մեկ աշխատողի հաշվով մոտակա տասնամյակում կբարձրանա ավելի քան 2 անգամ, իսկ 20 տարվա ընթացքում՝ ավելի քան 4 անգամ։

Տնտեսական պայմանների տեսակետից կոլտնտեսությունները կհավասարվեն գյուղատնտեսության համաժողովրդական ձեռնարկություններին։